ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2022 թվականի N 1527-Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, N 1 հավելվածի N 3 աղյուսակում կատարել փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն

ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ ու լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝

1) 2021 թվականի հունիսի 29-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2021/2 պայմանագրի կատարման համար կնքել համաձայնագիր՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 18-րդ կետի պահանջները.

2) մինչև 2022 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ երկարաձգել 2022 թվականի մայիսի 13-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԽԱՇՁԲ-22/1 պայմանագրի, 2021 թվականի նոյեմբերի 29-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/12 պայմանագրի, 2021 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11 պայմանագրի ժամկետները.

3) 2021 թվականի նոյեմբերի 25-ին կնքված թիվ ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-21/1, 2021 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11 և 2021 թվականի հունիսի 29-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2021/2 պայմանագրերի վրա չտարածել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջի սահմանափակումը՝ պայմանագրերով նախատեսված աշխատանքները փոխարինելով այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով, որոնք գումարային արտահայտությամբ կազմում են պայմանագրերի գների առավելագույնը երեսունհինգ տոկոսը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ